ՔԱՂՎԱԾՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4-ից

(արտահերթ նիստը գումարվել է 2025 թ.-ի փետրվարի 7-ին)

Նիստին մասնակցում էին կառավարման խորհրդի 11 անդամները: Նիստին մասնակցում էին «Երևանի Տ.Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Մարիաննա Նավասարդյանը և վարչատնտեսական մասի համակարգող Կարինե Ստեփանյանը, «Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Հ. Մարգարյանը և հաշվապահ Ռուզաննա Ամիրյանը, «Երևանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահ Հռիփսիմե Բաբուրյանը, «Երևանի Խ. Դաշտենցի անվան թիվ 114 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահ Ամալյա Սարգսյանցը :

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2025թ. բյուջեի նախահաշվի քննարկում:
2. Ուսումնական հաստատությունների տարիֆիկացիոն ցուցակների և հաստիքային ցուցակների քննարկում:

Լսեցին – 1. 2025թ. բյուջեի նախահաշվի քննարկում:

ա/ «Երևանի Տ.Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Կարինե Ստեփանյանը ներկայացրեց դպրոցի նախահաշիվը իր բոլոր հոդվածներով /նախահաշիվը կցվում է /:

բ/ «Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահ Ռուզաննա Ամիրյանը ներկայացրեց դպրոցի նախահաշիվը իր բոլոր հոդվածներով /նախահաշիվը կցվում է /: Կատարվում էին անհրաժեշտ պարզաբանումներ:

գ/ «Երևանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ –ի հաշվապահ Հռիփսիմե Բաբուրյանը ներկայացրեց դպրոցի նախահաշիվը իր բոլոր հոդվածներով /նախահաշիվը կցվում է /: Կատարվում էին անհրաժեշտ պարզաբանումներ:

դ/ «Երևանի Խ. Դաշտենցի անվան թիվ 114 ավագ դպրոց » ՊՈԱԿ-Ի

հաշվապահը ներկայացրեց դպրոցի նախահաշիվը իր բոլոր հոդվածներով /նախահաշիվը կցվում է /: Կատարվում էին անհրաժեշտ պարզաբանումներ:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջների համաձայն, հիմք ընդունելով լսածը և քննարկումները՝ կառավարման խորհուրդը

Որոշում է

1. Հավանություն տալ «Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Երևանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Երևանի Խ. Դաշտենցի անվան թիվ 114 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 2025 թ. Նախահաշիվներին:

Լսեցին – 2 . Ուսումնական հաստատությունների տարիֆիկացիոն ցուցակների և հաստիքային ցուցակների քննարկում:

Ներկայացվեցին.

1. Երևանի Տ. Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տարիֆիկացիոն ցուցակը և հաստիքային ցուցակը:
2. «Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տարիֆիկացիոն ցուցակը և հաստիքային ցուցակը:
3. «Երևանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ –ի տարիֆիկացիոն ցուցակը և հաստիքային ցուցակը:
4. «Երևանի Խ. Դաշտենցի անվան թիվ 114 ավագ դպրոց » ՊՈԱԿ-Ի տարիֆիկացիոն ցուցակը և հաստիքային ցուցակը:

Հիմք ընդունելով լսածը՝ կառավարման խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հավանություն տալ ուսումնական հաստատությունների տարիֆիկացիոն ցուցակներին և հաստիքային ցուցակներին:

Կառավարման խորհրդի նախագահ՝ Ն. Այվազյան

Քարտուղար՝ Շ. Գալստյան